ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արամ Մանուկյանի (1879-1919 թթ.) պետական գործունեության ուսումնասիրությունն ունի արդիական տեսական ու գործնական բացառիկ կարեւորություն: Հայոց պետականության վերականգնմանն ու ամրապնդմանը ուղղված նրա իրատեսական մոտեցումը, շրջահայեցությունը, արդյունավետ ձեռնարկները, տիրող իրավիճակին չհամակերպվելու եւ շրջապատին չենթարկվելու նրա անսասան վճռականությունը արդիական են, ուսանելի:

Անդրադառնալ Արամի պետական գործունեությանը, սահմանափակվելով սոսկ Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակաշրջանով, կլինի խիստ անբավարար:

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը կարելի է պարբերացնել չորս փուլի: Առաջին փուլն ընդգրկում է Վանի հայկական նահանգապետության շրջանը, երկրորդը՝ Երեւանում 1917 թ. դեկտեմբերից 1918 թ. մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումն ընկած ժամանակաշրջանը, երրորդը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումից մինչեւ նրա անդրանիկ կառավարության ձեւավորումն ընկած ժամանակահատվածը (1918 թ. մայիսի 28-ից հուլիսի 24-ը), չորրորդը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակաշրջանը:

Նման պարբերացման նպատակը Արամի պետական մտածողությունը եւ գործունեությունը պետականաշինության բնագավառում ամբողջության մեջ ներկայացնելու ձգտումն է:

Առաջին հայացքից զուցեեւ այնքան էլ ճիշտ չէ Վանի հայկական նահանգապետության 72-օրյա գոյության ընթացքում, ինչպես նաեւ Ռուսական կայսրության նախկին Երեւանի նահանգի տարածքում 1917 թ. դեկտեմբերից 1918 թ. մայիսի 28-ը Արամի ծավալած գործունեությունը որակել իբրեւ պետական, քանի որ երկու դեպքում էլ բառի բուն՝ եզրաբանական իմաստով չկային պետական միավորներ: Նրանցից առաջինը Ռուսական կայսրությանը ենթակա սահմանափակ ինքնուրույնություն ունեցող վարչական միավոր էր, իսկ երկրորդը՝ Ռուսական կայսրության քայքայումից հետո բախտի քմահաճույքին թողնված, դեպքերի բերումով նրանից փաստորեն անկախացած, բայց իրականում անորոշ կարգավիճակ ունեցող երկրամաս:

Սակայն, երբ վեր ենք բարձրանում «պետություն», «պետական», «պետականություն» հասկացությունների ձեւական՝ նեղ իմաստային ընկալումից եւ երեւույթները

դիտարկում ենք լայն համապատկերում, մասնավորապես, երբ դիտարկում ենք՝ 1) Վանի նահանգապետության որոշակի ինքնուրույնությունը, նահանգապետության հետ կապված հայության լայն շրջանակների եւ նահանգապետ Արամի ակնկալիքները, նահանգապետության պետական-վարչական ապարատի ստեղծումը, հատկապես իշխանության մարմինների գործառույթների սահմանումը եւ նրանց գործունեության համակարգումը, նահանգապետության առջեւ ծառացած հրատապ խնդիրների լուծման ժամանակ Արամի մոտեցումների բնույթը եւ որակական կողմերը, 2) 1917 թ. դեկտեմբերից 1918 թ. մայիսի 28-ը ձգվող ժամանակաշրջանում Արամի գործունեության նպատակը եւ մասշտաբայնությունը, այդ ժամանակահատվածում նրա գլխավորությամբ վարչաքաղաքական, ռազմական ու ընկերային-տնտեսական բնագավառներում իրականացված միջոցառումների բնույթն ու որակական մակարդակը, այդ գործակալությունն ամբողջությամբ անհետանում է: Եթե համառոտ ասենք, Արամի ձեռնարկումներն այդ ժամանակահատվածներում ունեին պետականության բնորոշ մակարդակ եւ բնույթ:

Վանի 1915 թ. ապրիլյան հաղթական հերոսամարտից հետո ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության հրամանով Վանի նահանգապետության ստեղծումը եւ հերոսամարտի կազմակերպիչ Արամ Մանուկյանի նշանակումը նահանգապետ բուռն ոգեւորություն առաջացրեց հայ ժողովրդի շրջանում: Դա բնական էր, քանզի անկախ պետականության կորստից դարեր անց, թեկուզեւ ռուսական զինվորական իշխանության ենթակայության ներքո, թեկուզեւ փոքրիկ տարածքում, հայ ժողովուրդը ստանում էր որոշակի ինքնուրույնություն:

Վանի նահանգապետի պաշտոնում Արամի գործունեությունը ճիշտ բնութագրելու համար հարկ է նախապես նկատի ունենալ երկու հանգամանք: Առաջին, այս նշանակման հեղինակ ռուսական հրամանատարության մտահոգությունը, բնականաբար, սեփական շահերի հետամտումն էր: Արամի նշանակումը կատարվել էր այն հաշվով, որ «նա ամբողջովին ենթարկվի զինվորական իշխանությանը՝ ի դեմս Վանի կայազորի պետի, եւ որ նրա միջոցով փոխանցվեն զինվորական իշխանության բոլոր կարգադրությունները»[1]: Արամից պահանջվելու էին մեծ ջանքեր հայկական շահերից բխող քաղաքականություն վարելու համար, քանի որ կողմերի դիրքորոշումները մի շարք հարցերում, ինչպես կտեսնենք, տարբեր էին: Երկրորդ, ողջունելով ռուսական զորքերի մուտքը Վան՝ Արամը Ռուսաստանի միապետին ուղարկվելիք հեռագրում խնդրել էր իրենց որպես ինքնավար Հայաստան ընդունել ռուսական հովանու ներքո[2]: Սա նշանակում է, որ նրա գործունեությունը նահանգապետի պաշտոնում, իհարկե, որքան որ թույլ տար ժամանակաշրջանը, միտված էր լինելու այդ գաղափարի կենսագործմանը: Այդպես մտածելու տեղիք է տալիս նաեւ նահանգապետի պաշտոնում նրա անդրանիկ ելույթը:

Ստանձնելով նահանգապետի պաշտոնը՝ մայիսի 8-ին ժողովրդին ուղղված ուղերձում Արամը կոչ արեց համախմբվել ձեւավորվելիք «կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի եւ ամբողջ շրջանի մէջ»[3]: Նրա գլխավոր

1 ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 44; ֆ. 121, ց. 2, գ. 158, թ. 1:

2 Տե՛ս **Ф. Елисеев**, Казаки на Кавказском фронте 1914-1917, Москва, 2001, էջ 97:

3 ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4:

մտահոգությունն էր՝ արժանի լինել ազատագրական պայքարի ճանապարհին նահատակվածների հույսերին եւ հիշատակին: Ասվածից հետեւում է, որ նա ձգտելու էր իրագործել ազատագրական շարժման նպատակները:

Նորաստեղծ նահանգապետության դրությունը չափազանց ծանր էր. շրջափակում, ավերված տնտեսություն, ցեղասպանությունից մազապուրծ 10.000 փախստականների առկայություն, պարենամթերքի սուր պակաս, համաճարակային հիվանդություններ եւ այլն:

Վանի նահանգապետի պաշտոնում նա լիովին վեր հանեց իր կազմակերպչական տաղանդը, ազգային-պետական մտածելակերպն ու անխտրական ոգին: Մինչ այդ իրեն որպես հասուն հասարակական-քաղաքական եւ կուսակցական գործիչ դրսեւորած Արամ Մանուկյանը նահանգապետի պաշտոնում պետական գործչին հատուկ մտածողությամբ, շրջահայացությամբ ու հետեւողականությամբ ձեռնամուխ եղավ նահանգի իշխանության մարմինների ձեւավորման, նահանգի հայության անվտանգության ապահովման, տնտեսության վերականգնման, սովի կանխման, օրինականության ապահովման եւ մյուս հրատապ խնդիրների լուծմանը:

Նրա գլխավորությամբ կարճ ժամանակում ձեւավորվեց նահանգի եւ՛ կառավարման համակարգը՝ իշխանության օրենսդիր ու գործադիր, կենտրոնական եւ տեղական մարմիններով, եւ՛ վարչական կառուցվածքը: Գործադիր մարմիններն էին՝ ոստիկանական տեսչությունը, կալվածական-գաղթականական, տնտեսական մարմինները, քաղաքապետական վարչությունը, դատարանը, գավառային վարչությունը եւ այլն[4]: Նրանց աշխատանքները գլխավորում էր Նահանգային վարչությունը: Նահանգի օրենսդիր մարմնի գործառույթները իրականացնելու համար ձեւավորվեց Վարչական խորհուրդ: Այն մշակելու էր օրինագծեր՝ենթարկելով նահանգապետի վավերացմանը, որն ուներ վետոյի իրավունք[5]: Ինչպես Վարչական խորհրդի, նույնպես եւ Նահանգային վարչության նախագահը նահանգապետն էր, որի կողմից ընտրվում էին այդ մարմինների եւ՛ անդամները, եւ՛ նախագահները: Ընդհանուր եւ մասնագետ քննիչների միջոցով նահանգապետը հսկելու էր հիշյալ մարմինների աշխատանքը: Փաստորեն Արամի ձեռքում կենտրոնացվեց նահանգի գործադիր եւ օրենսդիր ողջ իշխանությունը:

Արդեն նահանգի կառավարության ձեւավորման ժամանակ նա իրեն դրսեւորեց որպես պետական մտածող եւ գործիչ: Առաջնորդվելով հայ ժողովրդի շահերով՝ նա հանդես բերեց ապակուսակցական մոտեցում եւ կառավարության մեջ ընդգրկեց ներկայացուցիչներ բոլոր կուսակցություններից, ինչպես նաեւ անկուսակցականների՝ հիմք ընդունելով բացառապես նրանց բանիմացությունը[6]: Բազում առիթներով Արամի հասցեին քննադատական խոսքեր ուղղած ռամկավար ազդեցիկ գործիչ Ա. Թերզիբաշյանն ընդգծել է, որ Արամը պաշտոնյաներ նշանակելիս դրսեւորել է անաչառ մոտեցում: Այդ կարծիքն է հայտնել նաեւ Գուրգեն Մահարին:

---

4 Տես ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 7; «Բանբեր Հայաստանի արխիվների», Երեւան, 1969, թ. 1, էջ 212:

5 Տես ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 2:

6 Տես **Ա. Ասրյան**, Արամ Մանուկյան. կյանքը եւ գործը (Ազատագրական շարժման եւ անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երեւան, 2009, էջ 123:

Նահանգի իշխանության կենտրոնական մարմինների ձեւավորմանը զուգընթաց ձեւավորվեց նահանգի վարչական կառուցվածքը, ի դեմս գավառապետությունների: Վասպուրականի տարածքը բաժանվեց 14 գավառ-գավառակների: Ձեւավորվեցին գավառապետությունների կառավարման մարմիններ՝ նահանգապետի կողմից նշանակված գավառապետերի գլխավորությամբ: Գավառապետությունների վրա դրված էր ծանր բեռ եւ մեծ պատասխանատվություն. նրանք անմիջական գործադրողներն էին ինչպես բնակչությանը հուզող տարաբնույթ խնդիրների, այնպես էլ նահանգապետարանի կողմից առաջադրվող ծրագրերի: Այդ առումով առանձնահատուկ դեր էր վերապահված գավառային վարչությանը, որը որպես նահանգի կենտրոնական իշխանության մեկ օղակ, մշտապես ապահովում էր հարաբերությունները կենտրոնի եւ գավառապետությունների միջեւ՝ ուղղորդելով վերջիններիս աշխատանքները: Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը:

Առաջնային խնդիրներից էր նահանգի հայության անվտանգության հարցը: Նահանգի անվտանգությունը թշնամիներից, ամենից առաջ քրդերից ապահովելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնցում ընդգրկվեց շուրջ հազար մարդ: Նրանք նախ կամավորների հետ, ապա՝ ինքնուրույն կարողացան չեզոքացնել քրդական վտանգը: Ի հարկին, այդ գործին էին ուղղվում նաեւ գավառների ոստիկանության ուժերը:

Այլեւայլ, բայց հատկապես քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ տարակարծություններ նահանգապետ Արամի եւ ռուսական հրամանատարության միջեւ: Եթե Արամը ձգտում էր ամեն կերպ խափանել քրդերի վերադարձը՝ ոչնչացնելով կամ շահագործելով նրանց կալվածքները, ապա ռուսական հրամանատարությունը հատուկ հրամանով որոշել էր թույլատրել ռուսական հպատակությունն ընդունած քրդերի վերադարձը նահանգի տարածք եւ նահանգի հայությունից պահանջում էր չհարձակվել քրդերի վրա, ավելին, նահանգապետից էլ պահանջում էր ապահովել նրանց անվտանգությունը[7]:

Ելնելով հայության շահերից՝ Արամը փորձեց կանխել այդ որոշման կենսագործումը: Ռուսական բանակի հրամանատարությանն ուղղված գրություններում մատնանշելով 1914թ. աշնանը եւ ձմռանը հայերի նկատմամբ քրդերի ոճրագործությունները եւ թուրքերի հետ համատեղ գործողությունները ռուսական զորքերի դեմ՝ Արամը գտնում էր, որ նրանց հարկ է դիտել որպես ռազմագերիների՝ դրանից բխող հետեւանքով եւ կամ նրանց մեջ տեսնել սովորական հանցագործների եւ պատժել: Նա աշխատում էր հրամանատարությանը համոզել, որ քրդերի վերադարձով կխախտվի անդորրը Վանում այն պարզ պատճառով, որ ջարդված եւ կողոպտված հազարավոր հայերի հարազատները չէին կարող անտարբեր մնալ իրենց թշնամիների հանդեպ: Նա իրավացիորեն նշում էր, որ թույլատրել քրդերին վերադառնալ՝ կնշանակի, թե կարելի է անպատիժ կերպով կողոպտել եւ սպանել հայերին, որը վերջիններիս՝ Թուրքիայում «ռուսական զենքի հաջողության միակ անկեղծ կողմնակիցների» մոտ կառաջացնի ծանր հիասթափություն

7 Տես ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42, ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 6:

Ռուսաստանի հանդեպ: Իր մտքերն ազդու դարձնելու նպատակով Արամը համարձակորեն նշում էր, որ որոշման գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում հանդարտության եւ օրինակարգի համար[8]. դա ցարական միապետության պայմաններում մեծ հանդգնություն էր:

Արամը հետեւողական քայլեր ձեռնարկեց տնտեսության վերականգնման ուղղությամբ: Իրականացված քայլերից առաջնայինն ու կարեւորագույնը, թերեւս, գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումն էր, որի շնորհիվ ժողովուրդը կստանար աշխատանք եւ, միաժամանակ, կհաղթահարեր սովի վտանգը: Այդ նպատակով կենտրոնացվեցին նահանգում եղած գյուղատնտեսական գործիքները, դրսից ներկրվեցին գերանդիներ եւ անվճար բաժանվեցին ժողովրդին, Կովկասում պատվիրվեցին հնձող եւ կալսող մեքենաներ: Պարենային խնդիրը լուծելու, ինչպես նաեւ թուրք եւ քուրդ բնակչության վերադարձը կանխելու համար Արամն անհրաժեշտ համարեց մշակել նրանց կողմից լքված արտերը: Այս հարցում նա դարձյալ հանդիպեց Վանի պարեկի ընդդիմությանը, սակայն, կարողացավ հաղթահարել այն[9]:

Ավերված տնտեսության վերականգնմանը միտված կարեւոր քայլ էր նահանգից հեռացած թուրքերի ու քրդերի տների, հողամասերի ու այգիների աճուրդը, քանզի մի կողմից նահանգապետության գանձարան էին մտնում դրանց վաճառքից գոյացած գումարները, որոնք ուղղվում էին տնտեսության եւ այլ կարիքների լուծմանը, մյուս կողմից՝ նոր տնտեսություններ էին կազմվում, որը եւս նշանակում էր հայրենիքի վերաշինության արագացում:

Նահանգապետությունը կատարեց հնարավորինը ժողովրդի ծանր դրությունը մեղմելու, հատկապես սով թույլ չտալու եւ համաճարակները կանխելու ուղղություններով: Քանի որ նահանգապետության միջոցները սուղ էին, Արամը օգնության խնդրանքով դիմեց թե՛ նահանգի ժողովրդին՝ հայցելով նրա աջակցությունը, թե՛ Կովկասի եւ գաղութների հայությանը[10]: Առանձին գրությամբ Արամը խնդրեց նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե.-ի աջակցությունը[11]: Օգնությունն անհրաժեշտ էր նկատվում ոչ այնքան տվյալ պահի, որքան ձմռան պահուստ կուտակելու համար: Ի պատիվ դրսի հայության՝ օգնությունն առաքվեց ժամանակին: Այս իրողությունը եւս խոսում է Արամի հեռատեսության մասին:

Հատուկ ուշադրություն դարձվեց ժողովրդի շահերի պաշտպանությանը ռուս զինվորականությունից: Բանն այն է, որ զինվորական իշխանությունը հաճախ դիմում էր ապօրինությունների. գյուղերից ձրի վերցնում էին սնունդամթերք, վնասում էին արտերն ու այգիները, հայերից առգրավում էին գենքը: Հետեւողական աշխատանքի շնորհիվ Արամին հաջողվեց մեղմել ռուս զինվորականների ապօրինի արարքները: Արամը, փորձելով ինչ-որ չափով պաշտպանել հայոց շահերը, գենքի արտոնագրեր էր տալիս դրա կարիքը

8 Տե՛ս անդ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 45-47:

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 46:

10 Տե՛ս «Մշակ», 1915, հուլիսի 9, N 147:

11 Տե՛ս **Մ. Ավետիսյան**, Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թ. 2, էջ 137-138:

զգացող բնակիչներին[12], որը նրանց հնարավորություն էր ընձեռում վերահաստատվել քրդերի ներխուժման վտանգին ենթակա իրենց բնակավայրերում:

Լուրջ ուշադրություն դարձվեց նաեւ իրավակարգի ապահովմանը: Արդեն մայիսի 8-ին հրապարակած հրահանգով արգելվեց հրազենի գործադրումը, ոգելից խմիչքների վաճառքը զորքերին, լքված տների ինքնագլուխ զբաղեցումը, ապօրինի ծառահատումները եւ այլն[13]: Այս մոտեցումը կարեւոր էր նաեւ զինագրավումները կանխելու առումով, քանզի դրանք հաճախ պատճառաբանվում էին հայերի կողմից իրականացվող անտեղի կրակոցներով: Գողությունները եւ անիշխանական այլ քայլեր կանխելու համար բնակիչներին խստագույնս արգելվեց զինվորներից գնել որեւէ ապրանք, իսկ հայ կապալառուներին՝ ապօրինի յուրացնել լքված մահմեդական գյուղերի հացահատիկը եւ մյուս ապրանքները[14]: Պետական ավանդույթների բացակայության եւ պետական մեխանիզմների նոր ձեւավորման պայմաններում Արամը հարկադրված էր մեծ ուշադրություն դարձնել նաեւ բնակչության շահերի պաշտպանությանը պաշտոնեության չարաշահումներից[15]: Մասնավորապես, հուլիսի 6-ի շրջաբերականով նա պաշտոնեությանն արգելեց առանց ստացականի քաղաքացիներից որեւէ գումար գանձել, իսկ վերջիններիս իրավունք էր տրվում այդպիսի դեպքերում վճարում չկատարել[16]:

Նահանգապետության, անձամբ Արամի հոգածության ներքո էր գտնվում նաեւ եկեղեցին: 1915թ. ընթացքում ավերված եւ կողոպտված եկեղեցիներն ու վանքերն ազատվեցին թուրքական պետության կողմից գանձվող տուրքերից, նրանց հատկացվեց նյութական օգնություն, ինչը նրանց հնարավորություն տվեց ոտքի կանգնել:

Արամի սրտացավությունը ժողովրդի ճակատագրի հանդեպ բարձրացնում էր նահանգապետության վարկը ժողովրդի աչքին եւ, միաժամանակ, ապահովում նրա աջակցությունը իշխանություններին, որը կարեւոր պայման էր նահանգապետության ամրապնդման համար:

Հետապնդվելիք խնդիրներն իրագործելու նպատակով 1915թ. մայիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմվել էր նահանգապետության բյուջե՝ 178.340 ռուբլի գումարով: Բյուջեի մուտքերը պիտի գոյանային Վանում եւ արվարձաններում գործող 1250 առեւտրականներից եւ արհեստավորներից գանձվող եկամտահարկից, տասանորդից, ոչխարի տուրքից, լքված կալվածքների շահագործումից ստացված եկամուտներից եւ այլն:

Արամն ընդհանուր եւ մասնագետ քննիչների միջոցով վերահսկում էր նահանգապետության մարմինների աշխատանքը եւ բացահայտում թերությունները: Նրանք պարզել էին, որ նույն արարքի համար ոստիկանությունը երբեմն նշանակում էր տարբեր տուգանքներ, հստակ չէր գործավարությունը, տնտեսական մարմինը թերանում էր աճուրդների կազմակերպման հարցում, այն է՝ երբեմն աճուրդի դրված առարկան վաճառվում

12 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 8; գ. 16, թ. 2-3:
13 Տե՛ս անդ, գ. 43, թ. 1:
14 Տե՛ս անդ, թ. 12:
15 Տե՛ս **Ա. Ասրյան**, նշվ. աշխ. էջ 131:
16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 9:

էր արժեքից մի քանի անգամ էժան գնով: Որոշակի բացթողումներ կային եկամուտների աղբյուրների հաշվառման եւ բյուջեի մուտքերի ավելացման գործում[17]: Էականը, սակայն, այն է, որ նահանգապետ Արամը իրականացնում է քայլեր եղած թերությունները շտկելու, նահանգի իշխանության մարմինների գործունեությունը կանոնավորելու ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Վանի հայկական նահանգապետությունն օր-օրի ամրապնդվում էր: Դժբախտաբար, նահանգապետությունը երկար կյանք չունեցավ, ընդամենը 72 օր:

Արամի պետական մտածողությունն ու գործունեությունը հերթական անգամ դրսեւորվեցին հուլիսյան զաղթի օրերին: Երբ Վանում հայտնի դարձավ ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի՝ հուլիսի 11-ից սկսած նահանջի մասին, Արամը, հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, հայրենասիրություն, հայրենիքն աղետից փրկելու նպատակով ընտրեց դիմադրության կազմակերպման ծանր եւ պատասխանատու գործը[18]: Նա հրավիրեց Ապրիլյան հերոսամարտի ավելի քան 1000 մասնակիցների խորհրդակցություն, հայտարարեց 17-45 տարեկան տղամարդկանց հավաքագրում, կապվեց ռուսական հրամանատարության հետ՝ փորձելով նրանից զենք-զինամթերք ստանալ թուրքերին դիմադրություն կազմակերպելու նպատակով, նույն նպատակով քայլեր ձեռնարկեց հայ կամավորական ջոկատները Վանում կենտրոնացնելու համար, պատրաստվում էր Կովկասից խնդրել՝ արագացնելու նոր կամավորական ջոկատների առաքումը: Սակայն զաղթի կասեցումը նրա եւ հայրենանվեր մյուս գործիչների ուժից ու կամքից վեր էր:

Արամի հետեւողական գործունեությունը ազգային գործիչներով համալրված նահանգի կառավարման համակարգ ստեղծելու, վարչական կառույցների միջոցով նահանգապետության կյանքը կազմակերպելու, ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները լուծելու, այդ թվում նահանգապետությունը թշնամիներից պաշտպանելու, հուլիսյան զաղթը կանխելու ուղղությամբ, ինչպես նաեւ մոտեցման բնույթն այդ խնդիրների լուծմանը, առանց վարանելու, եթե, իհարկե, չկառչենք տերմինաբանական քարացած ձեւակերպումներից, կարելի է բնութագրել որպես պետական գործունեություն, իսկ Վանի նահանգապետությունը հայոց նորագույն անկախ պետականության նախատիպ: Նահանգապետության շրջանում ձեռք բերած այդ փորձն Արամն օգտագործեց ի նպաստ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման եւ ամրապնդման:

Հարկադրաբար 1915թ. հեռանալով Վանից՝ Արամը մինչեւ 1917թ. դեկտեմբեր ակտիվորեն մասնակցեց Կովկասում եռացող ազգային-քաղաքական կյանքին:

1917թ. ռուսական հեղափոխությունների հետեւանքով ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը թուրքական ներխուժման սպառնալիքի տակ դրեց ոչ միայն Արեւմտյան, այլեւ Արեւելյան Հայաստանը: Հայության առջեւ հրամայաբար ծառացավ հայոց բնօրրանի արեւելյան հատվածի զգալի մասը զբաղեցնող Երեւանի նահանգում ուժեղ իշխանություն ստեղծելու, Հայկական կորպուսը ձեւավորելու նպատակով նահան-

17 Տե՛ս անդ, ֆ. 242, ց. 1, գ. 14-ի II մաս, թ. 183, 169-176:
18 Տե՛ս **Ա. Ասրյան**, նշվ. աշխ., էջ 142-143:

գում կազմակերպված զորահավաք իրականացնելու, 100 հազարավոր արեւմտահայ փախստականների խնամքը հոգալու եւ այլ հրատապ խնդիրներ: Հայ ժողովրդի համար բախտորոշ այդ պահին՝ 1917թ. դեկտեմբերի 18-ին, Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային, Հայ զինվորական եւ Արեւմտահայ Ապահովության խորհուրդների լիազորներկայացուցչի կարգավիճակով Երեւան ժամանեց Արամը:

1917թ. դեկտեմբերից սկսվեց Արամի պետական գործունեության երկրորդ փուլը, որն ընդգրկում է մինչեւ 1918թ. մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումն ընկած ժամանակաշրջանը: Երեւանում Արամի ազգային պետական մտածողությունն ու գործունեությունը որակական նոր դրսեւորումներ ունեցան: Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երեւանում, գործելով բացառիկ պայմաններում, նա շատ արագ դարձավ կենտրոնական դեմք[19]:

Գիտակցելով տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական անցքերի հնարավոր բազմավտանգ հետեւանքները հայ ժողովրդի համար՝ Երեւան հասնելուն պես Արամն ուրվագծեց ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ եւ իրատեսական մի ուղեգիծ, ըստ որի հայ ժողովուրդը սեփական ուժերով պետք է հանգուցալուծեր իր առջեւ ծառացած խնդիրները: Նա ցուցաբերեց աներեւակայելի կազմակերպչական տաղանդ, զարմանալի շրջահայացություն ու նախաձեռնողականություն, երկաթյա կամք եւ բացառիկ հետեւողականություն՝ ժողովրդական գիտակցության մեջ սեփական ուժերի նկատմամբ հավատն ամրապնդելու եւ համազգային շարժում կազմակերպելու համար[20]:

Արամը, որպես հասուն քաղաքական-պետական մտածող, որն արդեն իսկ ուներ պետական գործունեության որոշակի փորձ, գիտակցելով, որ միայն բարի կամքն ու ցանկությունները, հոգեցունց կոչերը, գեղեցիկ հայրարարությունները, ինչպես նաեւ մեկ մարդու կամ մի խումբ մարդկանց ուժերը բավարար չեն հայության առջեւ ծառացած հսկայածավալ խնդիրները լուծելու համար, եւ որ դրանց լուծմանը կարելի է հասնել միայն լավ կազմակերպված եւ համակարգված աշխատանքով՝ անմիջապես ձեռնամուխ եղավ երկրամասի իշխանության իրապես գործող մարմինների ստեղծմանը, ինչպես նաեւ արդեն իսկ գոյություն ունեցող, սակայն ամլության մատնված մարմիններին շունչ տալու ոչ դյուրին գործին: Նրա գործունեության այս փուլը, ըստ էության, առաջին հերթին պետք է դիտարկել որպես պետականության բաղադրիչների ձեւավորման փուլ: Կարելի է ասել, որ արդեն այս շրջանից Արամը ձեռնամուխ եղավ պետականաշինության բարդ գործին՝ որոշակի հիմքեր դնելով Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման համար:

Արամի առաջարկությամբ ստեղծվեց Երեւանի նահանգի իշխանության նոր մարմին՝ Երեւանի Հայոց Ազգային խորհրդին հավասար իրավունքներով օժտված Հատուկ կոմիտե: Արամի ապակուսակցական ոգու շնորհիվ Երեւանի Հայոց Ազգային խորհրդի եւ Հատուկ կոմիտեի շուրջը համախմբվեցին եւ անդուլ աշխատանքի լծվեցին ամենքը, անկախ կուսակցական պատկանելությունից եւ գաղափարական համոզմունքներից:

19 Տե՛ս անդ, էջ 250:
20 Տե՛ս անդ, էջ 162-198:

Համակարգված աշխատանք տարվեց ցանկացած պետական կազմավորման համար մեկ այլ կարեւոր բաղադրիչի՝ կանոնավոր զորքի ստեղծման ուղղությամբ: Դրա համար հարկավոր էր անցկացնել կազմակերպված զորահավաք: Որպեսզի ստեղծվող բանակը լիներ նաեւ մարտունակ եւ հայրենանվեր, անհրաժեշտ էր զորակոչել բոլորին, բացառել խուսափողների թիվը: Արամի անմիջական մասնակցությամբ վարչական կառույցները ծավալեցին քարոզչական լայն աշխատանք՝ ժողովրդին կոչ անելով խրատել հայրենիքի պաշտպանների շարքերը: Հատուկ կոմիտեն զորակոչ հայտարարեց: Ծավալվեց հետեւողական աշխատանք 20-32 տարեկան բոլոր զինապարտներին հավաքագրելու համար: Այդ գործը հաջողությամբ ընթացավ ժողովրդական լայն զանգվածների բարձր գիտակցության շնորհիվ: Ընդգծելի է այն հանգամանքը, որ այդ գործին մասնակից էին դարձվում թե՛ ներքին գործերի բաժինը, թե՛ տեղական իշխանության մարմինները: Հայկական զորքի ձեւավորման գործը արդյունավորելու նպատակով երեւանյան իշխանությունները, հավատարիմ իրենց խոստմանը, միջոցներ ձեռնարկեցին զորակոչվողների ընտանիքների կարիքները հոգալու ուղղությամբ: 1918 թ. հունվարի 12-ին Հատուկ կոմիտեն որոշեց մինչեւ ազգային ու պետական միջոցների գոյացումը այդ գործը դնել գյուղական համայնքների վրա: Պարտավորություններից խուսափողները ենթակա էին պատասխանատվության եւ վճարելու էին կրկնակի: Այդ կերպ զորակոչվողներն ազատվում էին այն մտատանջությունից, որ իրենց ընտանիքները կարող են մատնվել սովի եւ այլ զրկանքների: Հետեւողական քայլերի շնորհիվ 1918 թ. մարտի սկզբին Հայկական կորպուսի երկրորդ դիվիզիան, նույն ինքը՝ Երեւանյան զորաջոկատը, հիմնականում կազմավորվել էր[21]:

Ինչպես հայկական զորքի ստեղծման, այնպես էլ Երեւանի նահանգի անվտանգության ապահովման եւ նահանգում կարգուկանոնի հաստատման տեսակետից անչափ կարեւոր էր թաթարական (ներկայումս՝ ադրբեջանցիներ) հակապետական խռովությունների ճնշումը: Արամի եւ Դրոյի գլխավորությամբ ծավալված վճռական եւ անզիջում պայքարի շնորհիվ միայն 1918թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին 50-ից ավելի թաթարական գյուղեր: Արամը, որպես հեռատես քաղաքական գործիչ եւ պետական մտածող, չբավարարվեց միայն նրանց հնազանդեցմամբ, այլ վարեց երկիրը այդ թշնամական տարրից մաքրելու քաղաքականություն: Այդ կերպ միաժամանակ լուծվում էին նաեւ ցեղասպանությունից մազապուրծ հայ փախստականների տեղավորման հարցերը:

Օգտվելով երկրում ստեղծված ծանրագույն իրավիճակից՝ աշխուժացել էին նաեւ հայ անիշխանական տարրերը: Սկզբնավորվել էր մի շարժում, որը հայտնի է մաուզերիզմ անունով: Մաուզերիստների գործողությունների հետեւանքով նահանգում ծաղկում էր թալանչիությունը, վտանգվում կյանքի եւ գույքի ապահովությունը, ընկնում էր տեղական իշխանության հեղինակությունը ժողովրդի շրջանում: Արամն անզիջում պայքար ծավալեց նաեւ անիշխանական եւ օրինազանց տարրերի դեմ: Դա խիստ կարեւոր էր երեւանյան իշխանությունների հեղինակությունը ժողովրդական զանգվածների

21 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5. **Ա. Հարությունյան**, Թուրքական ինտերվենցիան..., էջ 137:

շրջանում բարձր պահելու եւ երկրի առջեւ ծառացած խնդիրները լուծելու հարցում նրանց աջակցությունը ստանալու համար:

Արդեն այս շրջանից Արամի մոտ տեսնում ենք մի կարեւոր գիծ: Հանուն ազգային շահերի նա երբեմն շրջանցում էր օրենքը՝ իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը: Այս կապակցությամբ բնորոշ է ավազակային փարրերի պարագլուխ Զոլախ Գեւորգի մահապատիժը: Երբ բազմաթիվ նախազգուշացումներից հետո Զոլախ Գեւորգը չդադարեցրեց իր չարագործությունները եւ նույնիսկ ըմբոստացավ իշխանությունների դեմ, Արամը կարգադրեց գնդակահարել նրան[22]: Այդ կտրուկ քայլը կարեւոր դեր ունեցավ հանցագործությունների զսպման եւ նահանգում կարգուկանոնի հաստատման համար:

Արամի պետական մտածողության, հայրենիքի շահը ամեն ինչից վեր դասելու արտահայտություններից է նաեւ այն, որ նրա համար հայրենիքի փրկության ճանապարհին չկար որեւէ, այդ թվում եւ զաղափարական-քաղաքական խոչընդոտ: Նա, թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար, այլ գործիչների հետ բռնեց Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցելու ուղին: Դա այն դեպքում, երբ այնտեղ իշխող բոլշեւիկյան կուսակցությունը ՀՅ դաշնակցության զաղափարական-քաղաքական հակառակորդն էր: Նաեւ Արամի ջանքերով ընդունվեց հայ-բոլշեւիկյան համագործակցության ծրագիր, ըստ որի Արեւմտյան Հայաստանը լինելու էր անկախ, իսկ Արեւելյան Հայաստանը ամբողջ Կովկասի հետ միասին հայ-բոլշեւիկյան ուժերով խորհրդայնացվելու էր:

Կովկասյան ռազմաճակատում 1918 թ. հունվարի 28-ից հարձակման անցած թուրքական բանակի՝ Արեւմտյան Հայաստանը գրավելն ու մոտենալը Արեւելյան Հայաստանին, հայության առջեւ հրամայական անհրաժեշտություն դարձրեց Երեւանի նահանգի իշխանության հետագա ուժեղացումը: 1918 թ. մարտի 24-ին Երեւանի բնակչությունը, զորքը եւ Հայոց Ազգային խորհուրդը Արամին ընտրեցին Երեւանի նահանգի դիկտատոր՝ նրան օժտելով անսահմանափակ լիազորություններով: Պատմության մեջ, թերեւս, բացառիկ դեպքերից էր, երբ ժողովուրդը կամովին ընտրեց դիկտատոր, որն իր իշխանությունը մինչեւ վերջ օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային-քաղաքական, վարչական ու զինվորական կառույցներից:

Արամը լավ էր հասկանում, որ միայնակ ոչնչի հասնել հնարավոր չէ, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի հավաքական կամքից ու կարեւորում էր վերջինիս պատրաստակամությունը նվիրվելու ընդհանուր գործին, ուստի անընդհատ փորձում էր բարձրացնել նրա խանդավառությունը: Նա նշում էր. «...դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է եւ եթէ ժողովուրդը պատրաստակամութիւն ունի... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»[23]: Դիկտատորի պաշտոնը ստանձնելուց քիչ անց, 1918թ. մարտի 28-ին Արամը ժողովրդին դիմեց մի կոչով, որը միաժամա-

22 Տես **Բժ. Յովակիմ Մելիքեան,** Արեան ճանապարհով. «Հայրենիք», 1925, փետրվար, թ. 4, էջ 85. **Ա. Ասրյան**, նշվ. աշխ. էջ 173:

23 «Զանգ», 1918, մարտի 27, թ. 24:

նակ գործունեության համապարփակ ծրագիր էր՝ միփված ռազմաճակատի ամրապնդմանը, նահանգում ամուր իշխանության եւ կարգուկանոնի հասպատմանը: Գոտեպնդված իր հանդեպ ցուցաբերված բացառիկ վստահությունից, մեկ անգամ եւս հայտարարելով, որ քաղաքացիական ու զինվորական մարմինները պահպանելու են իրենց դերը, իսկ իր անելիքը լինելու է դրանց համակարգումն ու աշխատանքների արագացումը, Արամը հստակորեն սահմանեց նրանց անելիքները: Ժողովրդին ուղղված Արամի կոչն ավարտվում էր հետեւյալ խոսքերով. «Յոյց տանք աշխարհին, որ Հայը ազատ անկախ ապրելու իրաւունք ունի: Այժմ կամ երբէք»[24]: Արամի ներկայացրած ծրագրի հստակությունը, անկախության գաղափարը գործնականացնելու կոչը, անշուշտ, խոսում են նրա լայն մտահորիզոնի, պետական մտածողության, ժամանակաշրջանի մարտահրավերները ճիշտ ընկալելու եւ ճիշտ աշխատելու կարողության մասին:

Արամի ջանքերը գերագույն լարման հասան 1918 թ. մայիսին, երբ թուրքական զորքերը 1918 թ. մայիսի 21-ին գրավեցին Երեւանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատ կայարանն ու գյուղը, եւ ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Թշնամու չորսամսյա հաղթարշավը հայ քաղաքական շրջանակներին, զորքին, զորահրամանատարությանն ու բնակչությանը մատնել էր հուսալքության եւ անորոշության: Բացի այդ, մեր հարեւանները փորձում էին օգտվել հայ ժողովրդի համար ստեղծված ծանր իրադրությունից եւ Գերմանիայի ու Թուրքիայի աջակցությամբ տիրանալ հայկական տարածքներին: Փաստորեն, հաստատվում էր դեռեւս 1917թ. դեկտեմբերին Արամի առաջադրած քաղաքական ուղեգծի ճշմարտացիությունը, որ հայ ժողովուրդը միայնակ է եւ միայնակ էլ պետք է լուծի իր առջեւ ծառացած խնդիրները:

Ժողովրդի մեջ իշխող պարտվողական տրամադրությունները, որոնք հանգում էին նույնիսկ Ս. Էջմիածնից ու Երեւանից նահանջելու անհեթեթ մտքին, անխուսափելիորեն նրան տանելու էին դեպի կործանում, եթե չձեռնարկվեին արմատական հակամիջոցներ: Այդ ծայրահեղ, թվում է, թե անհուսալի իրավիճակում ցուցաբերելով կազմակերպչական մեծ ունակություններ, շրջահայեցություն, թշնամուն հակահարված հասցնելու աներեր վճռականություն, մեծագույն եռանդ ու լավատեսություն՝ Արամը կարողացավ անորոշության մատնված եւ հուսալքված ժողովրդի ու զորքի մեջ ամրապնդել հավատը սեփական ուժերի նկատմամբ, եւ կազմակերպվեցին Սարդարապատի եւ Ապարանի հաղթական հերոսամարտերը, որոնք հայ ժողովրդին ոչ միայն փրկեցին վերջնական բնաջնջումից, այլեւ ապահովեցին հայոց անկախ պետականության վերականգնումը[25]: 1918թ. մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության ստեղծման համար մեծապես պարտական ենք Արամին եւ ամենեւին էլ պատահական չէ, որ նա արժանացել է ՀՀ հիմնադրի կոչմանը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո սկսվեց Արամի պետական գործունեության (արդեն նաեւ եզրաբանական իմաստով) երրորդ փուլը:

Ճիշտ է, 1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակել էր նորանկախ Հայաստանի գերագույն իշխանություն եւ նրա քաղաքական ու վարչական

24 ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1. Կ. Սարդարյան, Պատմություն եւ իրականություն, Երեւան, 1991, էջ 15-16:
25 Տես **Ա. Ասրյան**, նշվ. աշխ., էջ 251:

ղեկը վարելու համար ստանձնել կառավարական գործառույթները[26], սակայն մի շարք պատճառներով թե՛ նրա եւ թե՛ նրա հանձնարարությամբ Հ. Քաջազնունու կողմից ձեւավորվող ՀՀ կառավարության ժամանումը Երեւան մոտ երկու ամիս ձգձգվում էր:

Նորանկախ Հայաստանի դժնդակ կացությունը թելադրում էր անհապաղ ստեղծել պետական իշխանություն եւ տեր կանգնել երկրի ու ժողովրդի ճակատագրին: Այսպիսի իրավիճակում Արամն անմիջապես լծվեց աշխատանքի՝ Հայաստանի անկախությունը գործնականացնելու եւ պետականության հիմքերը դնելու ուղղությամբ: 1918թ. հունիսի կեսերին Արամի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝Երեւանի Ազգային խորհրդի Վարչությունը, որը պետք է գործեր մինչեւ ՀՀ անդրանիկ կառավարության ժամանելը Երեւան[27]: Գրականության մեջ առավելապես Վարիչների մարմին անունով հայտնի այս օղակին պետք է ենթարկվեին երկրի պետական եւ հասարակական բոլոր հիմնարկությունները:

Երեւանի Հայոց Ազգային խորհրդի Վարչության նախագահը եւ զինվորական բաժնի վարիչը Արամ Մանուկյանն էր, թեեւ վերջին պաշտոնից նա ամեն կերպ փորձեց խուսափել[28]: Փաստորեն դարձյալ Արամի ձեռքում էր կենտրոնացվում երկրի գործադիր իշխանությունը: Հայաստանի Առաջին Հանրապետության պետական գործիչներից Ա. Բաբալյանը հանրապետության առաջին օրերի մասին գրելիս նկատել է. «Արամն էր, որ փաստօրէն կառավարում էր երկիրը: Իբրեւ լիազօր Ազգային Խորհրդի, նա կազմակերպել էր վարչութիւնները եւ սպասում էր նորընտիր կառավարութեան եւ Ազգային Խորհրդի Երեւան տեղափոխուելուն»[29]: Վարչությունն ուներ զինվորական, ներքին գործերի, պարենավորման, ֆինանսների եւ այլ բաժիններ: Նրանց ձեւավորման ժամանակ հերթական անգամ Արամը դրսեւորեց ապակուսակցական մոտեցում: Լինելով ՀՅ դաշնակցության ղեկավար գործիչներից՝ նա ներգրավեց բոլոր կարող ուժերին՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

Երեւանի Վարչությունը ձեռնամուխ եղավ ռազմական, վարչական, ընկերային-տնտեսական եւ այլ հրատապ խնդիրների լուծմանը[30]: Համակարգված աշխատանքներ կատարվեցին երկիրը թուրքական ոտնձգություններից պաշտպանելու, վարչական մարնի, միլիցիայի եւ պետական մյուս հաստատությունների ամրապնդման, իրավակարգի հաստատման, պարենային ճգնաժամը մեղմելու ուղղություններով:

Պետական հաստատությունների գործունեությունը կանոնավորելու եւ, միաժամանակ, պետության սուղ միջոցների վատնումը կանխելու նպատակով Երեւանի Ազգային խորհրդի 1918 թ. հունիսյան որոշումներից մեկով լուծարվում էին Թուրքիային անցած գարաձքների պետական հաստատությունները, իսկ նրանց աշխատակիցներն ազատվում էին աշխատանքից: Որոշումն ուներ մի կարեւոր կետ. նրանք, ովքեր աշխատում էին ոչ իրենց շրջանում, բայց Հայաստանի գարաձքում, նաեւ նրանք, ովքեր չէին կարողա-

26 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2000, էջ 18 :

27 Տե՛ս «Լրատու» Երեւանի Հայոց Ազգային խորհրդի, Երեւան, 1918, հուլիսի 9,թ. 2, հուլիսի 23, թ. 6:

28 Տե՛ս **Ա. Ասլյան,** նշվ. աշխ., էջ 211-212:

29 **Ա. Բաբալեան,** Էջեր՝Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 8:

30 Տես **Ա. Ասլյան** , նշվ. աշխ., էջ 210-218:

ցել փեղափոխվել իրենց աշխատավայրեր՝ հուլիսի 1-ից սպանալու էին վեցամսյա վարձատրություն: Իսկ ահա իրենց մեղքով աշխատանքի չներկայացածները հեռացվելու էին աշխատանքից:

Իրականացվում էին քայլեր նորանկախ երկրի ճակատագրի եւ իրենց զբաղեցրած դիրքի նկատմամբ պաշտոնյաների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես, Ղամարլուի տեղամասի կոմիսար Գ. Սադոյանցն աշխատանքից հեռացվել էր այն բանի համար, որ 1918 թ. հունիսին այդ շրջանի էվակուացիայի ժամանակ առաջինն էր լքել շրջանը, որի պատճառով գրասենյակը կողոպտվել էր:

Կտրուկ քայլեր ձեռնարկվեցին տարաբնույթ օրինախախտումների, անիշխանական դրսեւորումների առաջն առնելու ուղղությամբ: Մասնավորապես, կարգի հրավիրվեցին Նոր Բայազետի գավառի այն գյուղերը, որոնք չէին ճանաչում Երեւանի Ազգային խորհրդի իշխանությունը, զորքին չէին տրամադրում պարենամթերք եւ թաքցնում էին դասալիքներին:

Արամը եւ նրա կառավարությունը ոչինչ չէին թողնում ինքնահոսի, ամեն ինչի նկատմամբ ցուցաբերվում էր հիրավի պետական մոտեցում: Բնորոշ է հետեւյալ օրինակը. Երեւանի գավառային կոմիսարին հանձնարարվեց ձեռնարկել միջոցներ, որպեսզի Քանաքեռ գյուղի բնակիչները չնեղեն այստեղ հաստատված փախստականներին: Այդ նպատակով սահմանվեց հաստատագրված ամսական վարձ փախստականների կողմից օգտագործվող սենյակների դիմաց, ինչպես նաեւ նրանց անասունները արոտավայրերում արածեցնելու կարգ:

Քայլեր կատարվեցին պարենային ճգնաժամը մեղմելու ուղղությամբ: Պարենային ծանր կացությունը ստիպեց 1918 թ. հուլիսի 9-ին երկրում սահմանել հացի պետական մենաշնորհ: Այս հարցում եւս ցուցաբերվեց պետական մոտեցում: Հրապարակված որոշմամբ հստակորեն սահմանվեցին հացահատիկի հավաքման, հսկողության կարգը, պետականացված բերքի գինը եւ այլ հանգամանքներ: Գյուղացիների դժգոհությունը մեղմելու նպատակով նրանց էր թողնվում իրենց ընտանիքներին հարկավոր չափաբաժինը, իսկ մնացածը համապատասխան գնով, որից չպետք է տուժեին ո՛չ գյուղացին եւ ո՛չ էլ քաղաքացին, վերցնում էր պետությունը՝ բնակչության մնացած մասին ու զորքին հատկացնելու համար: Ձեռնարկվեցին միջոցներ երկրի տնտեսությունը հսկողության տակ պահելու եւ ֆինանսական սուղ միջոցները լրացնելու ուղղությամբ:

Քաջ գիտակցելով լրատվության կարեւորությունը պետականաշինության համար այդ բարդ ժամանակաշրջանում՝ հունիսի 23-ին որոշվեց հիմնել պետական թերթ՝ «Երեւանի Ազգային խորհրդի լրատու»-ն: Ավելին, մամուլի գործունեությունը ինքնահոսի չմատնելու նպատակով նույն օրը ստեղծվեց պատերազմական ժամանակի մամուլի վերաբերյալ հրահանգ մշակող հանձնաժողով: Որոշակի հսկողություն սահմանվեց հրապարակային ելույթների վրա, անշուշտ, ելնելով այն հայեցակետից, որ իրականացվելիք ձեռնարկների հաջողությունն ամենից առաջ պայմանավորված էր հասարակական կայունությամբ:

Այսպիսով, Արամի գլխավորությամբ գործող Երեւանի կառավարությունը Հայաստանի անկախության հռչակմանը հաջորդած երկու ամիսների ընթացքում զգալի աշխա-

փանք կատարեց Հայաստանի պետականաշինության ուղղությամբ, ապահովեց նրա կյանքի տարբեր ոլորտների որոնումներություն ու համեմատական կայունությունը[31]:

1918թ. հուլիսի 19-ին, Արամի վճռական պահանջից հետո միայն, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի եւ Հ. Քաջազնունու կառավարության անդամները ժամանեցին Երեւան[32]: Հուլիսի 20-ին Երեւանի եւ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդների համատեղ նիստում Արամը հայտնեց իշխանությունը ՀՀ «օրինաւոր կառավարությանը» հանձնելու մասին եւ պատրաստակամություն հայտնեց աջակցելու նրան՝ «երկրում կարգ ու կանոն եւ տանելի կյանք ստեղծելու գործում»[33]:

Հ. Քաջազնունու կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք: Դա հետեւանք էր մի կողմից նրա արժանիքների, մյուս կողմից՝ այն հանգամանքի, որ ներքին գործերից բացի նրա ենթակայության ներքո էին կենտրոնացվել նաեւ լուսավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության նախարարությունները, ինչպես նաեւ տեղական իշխանության խնդիրները[34]: Այս հանգամանքը հիմք է տալիս մեզ համաձայնելու Ռուբենի այն մտքին, թե «1918ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմած, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը...»[35]:

Թերեւս պակաս կարեւոր չէ այն հանգամանքը, որ Արամը վայելում էր ժողովրդի անվերապահ վստահությունն ու աջակցությունը, ինչը նրա անսահման հայրենասիրության, անշահախնդրության, համեստ կենցաղավարության, իր ժողովրդին մատուցած անցյալի ծառայությունների անմիջական հետեւանք էր: Դա այդ ծանրագույն ժամանակաշրջանում նրան առավել ազատ եւ համարձակ գործելու հնարավորություն էր ընձեռում:

Ինչեւէ, 1918թ. հուլիսի 26-ին ՆԳ նախարարի պաշտոնի ստանձնումով սկսվեց Արամի պետական գործունեության չորրորդ փուլը:

Նոր պաշտոնում ու նոր պայմաններում Արամի ազգային-պետական մտածողությունն ու գործելակերպը նոր շունչ եւ որակական նոր դրսեւորումներ ստացան: Համալսարանական կրթության պակասն ինչպես միշտ, այժմ եւս նրան չխանգարեց ծավալելու խելամիտ ու նպատակային գործունեություն: Նա միշտ հանդես եկավ նախաձեռնողի, իրադարձություններին ընթացք տվողի դերում, որպիսիք կարեւորագույն գծեր են յուրաքանչյուր բարձրաստիճան պաշտոնյայի համար, հատկապես այն օրերի նման բախտորոշ ժամանակաշրջանում:

Անշուշտ, Արամի այս որակները նկատի ունենալով է Ս. Վրացյանը գրել է, որ Արամը միակն էր, որ «այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում եւ պետական» շինարարություն սկսել[36]: Ավելին, Հայաստանի Հանրապետության երկրորդ՝ կոալիցիոն կառավարության ձեւավորման ժամանակ ՀՅԴ-ն՝ մերժելով Արա-

31 Տե՛ս անդ, էջ 218:

32 Տե՛ս **Ա. Բաբայեան**, նշվ. աշխ., էջ 8:

33 Տե՛ս անդ, հուլիսի 23, թ. 6:

34 Անդ, էջ 220:

35 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երեւան, 1990, էջ 312:

36 «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950», Պատրաստեց՝ Ս. Վրացեան, Բոստոն, 1950, էջ 467:

մին կառավարության մեջ չընդգրկելու Հայ ժողովրդական կուսակցության անդամների պահանջը՝ հայտարարեց, որ միայն Արամ Մանուկյանը կարող է կարգ պահել երկրում:

Արամն անսպառ եռանդով մասնակցեց կառավարության հետապնդած ծրագրի իրականացմանը, որով նախատեսվում էր երկրում իրավակարգի, կյանքի եւ գույքի ապահովության հաստատում, հաղորդակցության ճանապարհների բացում, պարենային ճգնաժամի հաղթահարում, հոգածություն փախստականության ու գաղթականության նկատմամբ, ներքին ու արտաքին փոստ-հեռագրական կապի վերահաստատում, բանակի վերակազմավորում, տնտեսական կյանքի վերականգնում, հարեւանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում, արտաքին վտանգների չեզոքացում:

Առաջնահերթ խնդիրներից մեկը երկրում կյանքի եւ գույքի ապահովության, իրավակարգի, ամուր իշխանության հաստատումն էր: Անկախության սկզբնական շրջանում երկրում մեծ չափերի էին հասնում հանցագործությունները, այդ թվում եւ սպանությունները, մառզերիզմը: Իրավիճակը մտահոգիչ էր նաեւ այն առումով, որ մի շարք գյուղերում բնակչությունը խուսափում էր հարկերի վճարումից[37]:

Առաջադրված խնդրի հաջող իրագործման նպատակով Արամ Մանուկյանն առաջ քաշեց մասնավոր զենք-զինամթերքի պետականացման խնդիրը: Խորհրդարանում հիմնավորելով հարցը՝ Արամն իրավացիորեն նշում էր, որ երկրում ոչ մի իշխանություն չի կարելի հաստատել, քանի որ կառավարության կարգադրությունները չեն կատարվում, իսկ հարկադրանքի դեպքում հանդիպում են զինված դիմադրության: Նա իրավացիորեն գտնում էր, որ եթե ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտություն էր եւ ուներ ինքնապաշտպանական նպատակներ, ապա տվյալ պահին անձի անձեռնմխելիությունը, ունեցվածքի եւ այլ իրավունքների պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն էր[38]: 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց Արամի ներկայացրած «Մասնաւոր սեփականութիւն կազմող զէնքերի եւ զինամթերքների պետականացման մասին» օրենքը[39]: Վտանգված գյուղերի ինքնապաշտպանությանը չվնասելու նպատակով նախատեսվում էր այդ գյուղերից գրավված զենքի մի մասը թողնել տեղում՝ հատուկ մարդկանց պահպանության ներքո:

Ծավալվեց հետեւողական եւ անզիջում պայքար օրինազանցությունների, այդ թվում եւ իշխանության ներկայացուցիչներին չենթարկվողների դեմ: 1918թ. հոկտեմբերի 8-ին, ընթացք տալով Երեւանի գավառային կոմիսարի դիմումին, Արամը երեք ամսով կալանքի ենթարկեց զինագրավման մասին օրենքը խախտած Գ. Ավանեսովին եւ Հ. Օրդուեին: Հոկտեմբերի 28-ին Արամի հրամանով մեկ ամսով կալանվեց Սարդարապատի բնակիչ Գ. Հակոբյանը՝ իշխանության ներկայացուցչի պահանջին չենթարկվելու եւ նրան ծեծելու համար[40] եւ այլն:

ՆԳ նախարարության հետապնդած տարաբնույթ խնդիրների հաջող կենսագործու-

37 Տե՛ս «Զանգ», Երեւան, 1918, օգոստոսի 17, թ. 46:

38 Տե՛ս **Ա. Ասրյան**, նշվ. աշխ. էջ 223:

39 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1. «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.», Երեւան, 1998, էջ 2-3:

40 ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 16, թ. 35, թ. 73:

մը ենթադրում էր ներքին գործերի համակարգի ուժեղացում, նրա բաժինների եւ աշխատակիցների գործառույթների հստակեցում, սեփական շարքերի մաքրում անհուսալի եւ օրինազանց աշխատակիցներից, ինչը եւ կատարում էր Արամը՝ առանց խտրականության: Դրա ակնառու դրսեւորումներից է այն իրողությունը, որ հոկտեմբերի 12-ին Արամը պարենավորման բաժանմունքի վարիչին հրահանգեց նույն բաժանմունքի պաշտոնյա, Ապարանի հերոսներից Արսեն Տեր-Պողոսյանին ժամանակավորապես՝ մինչեւ քննության ավարտը, ազատել աշխատանքից՝ հիմք ունենալով նրա նկատմամբ առաջադրված մեղադրանքները[41]:

Արամը փորձում էր վերացնել նաեւ հանցագործությունների առաջացմանը նպաստող պայմանները: Այսպես, Հայաստանի խորհրդի նախագահի եւ քարտուղարի անուններով կեղծ վկայագիր կազմելու եւ դրանով հացահատիկ հավաքելու համար 1918թ. սեպտեմբերի 26-ին ձերբակալվել էր Ե. Լուսիկյանը: Ելնելով այդ դեպքից՝ նա գավառային եւ գեղամասային կոմիսարներին հանձնարարեց նմանօրինակ թյուրիմացություններից խուսափելու համար լինել զգոն, գործել իրենց պարտականությունների շրջանակներում, իսկ օրենքով չնախատեսված դեպքերում գործել միայն վերադասի արտոնությամբ:

Արամի տնօրինությանն էին հանձնվել նաեւ տեղական իշխանության խնդիրները: Նա էր նշանակում եւ ազատում տեղական վարչական պաշտոնյաներին, ներառյալ գավառային ու գավառամասային կոմիսարներին: Սակայն կարեւորն այստեղ Արամի ցուցաբերած պետական մոտեցումն էր գործին: Արամն ամեն ինչ անում էր իր ենթակայության ներքո գտնվող պետական բոլոր ծառայողներին զգաստացնելու, վստահված գործի նկատմամբ նրանց մեջ պետական մոտեցում սերմանելու համար: 1918թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով Արամն ի գիտություն գավառային պաշտոնյաների՝ հայտարարեց, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքվեն, ապա նրանք կհեռացվեն աշխատանքից եւ դատի կտրվեն[42]: Մեկ այլ անգամ նա գավառային կոմիսարներին առաջարկեց ներկայացնել իրենց տեսակետներն այն մասին, թե որքանով են վարչական մարմինների համար նախատեսված հաստիքները համապատասխան իրենց գավառներում: Կոմիսարներին առաջարկվում էր իրենց տեսակետներն արտահայտելիս ելնել պետական գանձարանի ծախսերը խնայելու անհրաժեշտությունից եւ որոշված նորմերի ավելացման անհրաժեշտության առաջարկի դեպքում ներկայացնել անհերքելի հիմնավորում[43]:

Արամը հետեւողական քայլեր ձեռնարկեց պարենային ճգնաժամի մեղմացման, լուսավորության, հարյուր հազարավոր փախստականների եւ որբերի հոգսերը հոգալու, հեռագրակապը վերականգնելու, ռադիոցանց ստեղծելու, ավտոմեքենաների շարժակազմը նորոգելու եւ այլ ուղղություններով:

Պարենային ծանր կացությունը մեղմելու համար, բացի հացից, օգոստոսից պետական մենաշնորհ հաստատվեց նաեւ գետնախնձորի, բամբակի, խմիչքների, աղի, կար-

41 Տե՛ս անդ, ց. 2, գ. 1, թ. 122:
42 Տե՛ս անդ, ց. 1, գ. 1, թ. 79, 80, 81, 82:
43 Տե՛ս անդ, ց. 2, գ. 47, թ. 120:

տոֆիլի նկատմամբ[44]: Ձեռնարկվեցին քայլեր հանրապետության տարածք մթերքների պետական ներկրում կազմակերպելու եւ քաղաքացիների կողմից դրանց ներմուծումը դյուրացնելու ուղղությամբ: 1918թ. օգոստոսի սկզբներին Արամի կարգադրությամբ ապրանքների ներմուծումը հայտարարվեց ազատ, իսկ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելվեց եւ պետք է կատարվեր միայն հատուկ թույլտվությամբ[45]: Նոյեմբերի 28-ին Արամը ֆինանսների նախարարին խնդրեց մաքսային հասպատությունների վարչությանը կարգադրել արտոնելու պարենամթերքի անարգել ներկրումը հանրապետություն:

Արամը երկրում կատարվող գրագրությունների հայացման նախանձախնդիր էր: Մասնավորապես, նրա առաջարկությամբ ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 14-ի նիստում որոշում ընդունեց նոյեմբերի 1-ից երկրում հեռագրերը ռուսերենի հետ հայերեն լեզվով հաղորդելու մասին[46]:

Արամ Մանուկյանի նախանձախնդրությունն ու սրտացավությունն ակնհայտ էր առանձնապես որբերի խնամքի հարցում: Քաջ գիտակցելով, որ բավարար միջոցների բացակայության պայմաններում միայն համաժողովրդական մոտեցման դեպքում հնարավոր կլինի 50 հազարի հասնող որբերին փրկել մահվան ճիրաններից՝ Արամը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին: Ժողովրդի աջակցությունը ստանալու համար նա դիմում էր նրա գիտակցությանն ու բնազդին՝ հետեւյալ հոգեցունց խոսքերով. «Թառամում է խոշորագոյն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի, որի համար ցեղի լաւագոյն մարդիկը պայքարեցին, տառապեցին եւ նահատակուեցին»: Նա ժողովրդին կոչ էր անում օգնել որբերին եւ հույս հայտնում, որ փոխադարձ ջանքերով կարելի կլինի փրկել նրանց[47]:

Արամի պետական գործունեության նկարագիրն ամբողջացնելու եւ գնահատելու համար խիստ կարեւոր է մի կողմից ազգային-պետական շահերի, մյուս կողմից՝ օրենքի, օրինականության եւ կարգուկանոնի նկատմամբ նրա դիրքորոշման պարզաբանումը: Այդ դիրքորոշումը միանշանակ էր ու չափազանց հստակ: Արամին խորթ էին պետական պաշտոնյայի գործառույթների, ինչպես նաեւ օրենքների դոգմատիկ, կույր ընկալումն ու մեխանիկական կիրառումը, եւ ընդհակառակը, ընդունելի էին պետության եւ ժողովրդի շահերը, եթե նույնիսկ դրանք օրենքով ամրագրված չէին, ընդունելի էր նաեւ օրենքի շրջանցումը, եթե այդ օրենքի կատարումը կարող էր վնասել երկրի ու ժողովրդի շահերին: Նա իրավացիորեն գտնում էր, որ «կան դէպքեր...երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում զահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[48]: Ասվածը հաստատելու համար ներկայացնենք մի քանի ուշագրավ օրինակ:

---

44 Տե՛ս «Զանգ», 1918, սեպտեմբերի 28,թ. 57, **Ա. Ասրյան**, էջ 230:
45 Տե՛ս «Զանգ», 1918, օգոստոսի 10, թ. 4, **Ա. Ասրյան**,անդ, էջ 230:
46 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 25:
47 Տե՛ս անդ, ֆ. 201, ց. 1, գ. 38 (Ի մաս), թ. 53-54, ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 19,**Ա. Ասրյան**, նշվ. աշխ., էջ 235:
48 «Արամը», Մահուան յիսնամեակին առթիւ, Երեւան, 1991, էջ 140:

Իբրեւ ՆԳ նախարար՝ Արամը պարտավոր էր ապահովել հանրապետության ողջ բնակչության անվտանգությունը: Սակայն հայոց պատմական տարածքներում նստած թուրք-թաթարական զանգվածների հակապետական գործողությունների հետեւանքով պետության գլխին կախված մահացու սպառնալիքը եւ անօթեւան հայ փախստականների ոչնչացման վտանգը նրան դրդում էին գործել այլ կերպ: Նա ոչ միայն զենք-զինամթերք էր տրամադրում երկիրը թուրք-թաթարական թշնամական զանգվածներից մաքրելու համար ազատագրական գործողություններ իրականացնող խմբապետ Մուշեղի եւ ուրիշների գլխավորած արեւմտահայկական ուժերին[49], այլեւ այդ նպատակի համար երբեմն օգտագործում էր միլիցիայի ուժերը[50]: Այդ կերպ նա ապահովում էր հանրապետության անվտանգությունը, միաժամանակ, նպաստում հայ փախստականների տեղավորմանն ու կյանքի համար տանելի պայմանների ստեղծմանը:

Այդ ժամանակաշրջանում Արամը քայլեր էր ձեռնարկում զինվորական եւ այլ կառույցների զբաղեցրած դպրոցական շենքերն ազատելու եւ կրթական գործընթացը վերսկսելու համար: Սակայն, ելնելով որբերին պատսպարելու, հետեւաբար նրանց անխուսափելի զրկանքներից եւ կործանումից փրկելու անհրաժեշտությունից՝ Արամն արդարացրեց Երեւանի դպրոցներից մեկը նրանց հատկացնելու մասին Ռուբենի՝ օրենքով չարգելված արարքը եւ դրանով իսկ հավանություն տվեց վերջինիս այն մտքին, թե «ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարեւոր չէ, քան փողոցներում թափառածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը»[51]:

Կարեւորն այն է, որ Արամի նախաձեռնությունները զերծ էին անձնական շահախնդրությունից: Նա ապրում եւ սնվում էր ինչպես հասարակ երեւանցին, անգամ պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում: Գործ ունենալով հսկայական գումարների հետ եւ օժտված լինելով մեծ իշխանությամբ՝ նա երբեք դրանք չծառայեցրեց իր անձնական հարստացմանը, երբեք չշրջանցեց օրենքը:

Արամի գործունեության բնութագրական կողմերից է նրա դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերություններում: Ամբողջ կյանքը թուրքերի դեմ պայքարած, տվյալ պահին նրանց կողմից ուղղորդվող թաթարական հակապետական շարժումները ճնշող Արամն առերեւույթ պահպանում էր բարեհաճ վերաբերմունք նրանց նկատմամբ: Մասնավորապես, նա պատշաճ ընդունելություն կազմակերպեց 1918թ. օգոստոսի 31-ին Երեւան ժամանած թուրք զորավար Խալիլին[52], ավելին անձամբ ժամանեց երկաթուղային կայարան՝ նրան դիմավորելու համար:

Արամի պետական մտքեցումն ակնհայտ էր նաեւ կոալիցիոն կառավարություն ստեղծելու հարցում: 1918 թ. աշնանը Հայ ժողովրդական կուսակցությունը, որը հունիսին հրաժարվել էր մասնակցել Հ. Քաջազնունու կառավարության ձեւավորմանը, ցանկություն հայտնեց մասնակցելու պետության կառավարման գործին եւ ՀՅԴ-ական կազմել

49 Տե՛ս Ռուբէն, հ. 7, էջ 111:

50 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 15:

51 Տե՛ս «Արամը», էջ 139:

52 ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 55. **Վ. Նաւասարդեան,** Արամի կեանքից, «Հայրենիք», 1925, նոյեմբեր, թ. 1, էջ 75-79:

կոալիցիոն կառավարություն: Կոալիցիոն կառավարություն ձեւավորելու պահանջ դրեց նաեւ Արամ Մանուկյանը, չնայած այն հանգամանքին, որ նույն ՀԺԿ ներկայացուցիչները պահանջում էին նրան չընդգրկել կառավարության մեջ, չնայած նաեւ այն հանգամանքին, որ այդ դեպքում նրա լիազորությունների շրջանակը որոշակիորեն կրճատվելու էր: Բանն այն է, որ նախատեսվում էր պարենավորման, լուսավորության եւ խնամատարության նախարարների առանձին պաշտոնների ստեղծում, որոնց գործառույթները փվյալ պահին գտնվում էին Արամի ձեռքում: Նրա դիրքորոշման պատճառները շատ պարզ էին. կոալիցիոն կառավարության ձեւավորմամբ կառավարություն կներգրավվեին բարձրորակ կադրեր, որոնցով ՀԺԿ-ն հարուստ էր, բացի այդ, կառավարությունը կունենար առավել մեծ ժողովրդականություն, հետեւաբար ավելի ամուր հիմքեր կստեղծվեին ազգային միասնության եւ պետականության ամրապնդման համար:

Դժբախտաբար, Արամ Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել եւ շարունակել հանրապետության ամրապնդմանն ուղղված իրատեսական, կշռադատված ու արդյունավետ գործունեությունը: Ժողովրդի հետ ամենօրյա անմիջական շփումների մեջ գտնվող գործիչը 1918թ. դեկտեմբերին վարակվեց բծավոր տիֆով եւ 1919թ. հունվարի 29-ին կնքեց մահկանացուն: Արամի մահը ցնցեց հայ ժողովրդին, պետական ու հասարակական-քաղաքական գործիչներին: Նրա հուղարկավորությունը վերածվեց համաժողովրդական սուգի: Հուղարկավորությանը մասնակցում էր ամբողջ Երեւանը, մեծ ու փոքր, որպեսզի վերջին անգամ հարգանքի տուրք մատուցեր մի մարդու, որին վստահել էր իր ճակատագիրն ամենաօրհասական պահերին եւ չէր սխալվել:

Այսպիսով, Արամ Մանուկյանն իր ողջ պետական գործունեության ընթացքում աչքի ընկավ քաղաքական հասունությամբ ու հեռատեսությամբ, իրատեսությամբ ու շրջահայացությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, անկոտրում կամքով, անշահախնդիր վարքով, համեստ կենցաղով եւ մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Այդ հատկանիշները նրա գործունեությունը դարձրին խիստ արգասավոր: Նա առաջնակարգ եւ հսկայական դերակատարություն ունեցավ հայոց նորագույն անկախ պետականության ստեղծման եւ պետականաշինության գործընթացում:

Արամ Մանուկյանի կյանքը եւ պետական գործունեությունը կարող է հիանալի դաս լինել ներկա ու ապագա սերունդների, առաջին հերթին պետական եւ քաղաքական այրերի համար: